Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
հունիսի 5-ի N 291 - Ա
որոշման

# «ՍԵՎԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԻՄՆՈՒՄ»

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Սևանի և 10 շրջակա գյուղերի՝ հաշմանդամություն և զարգացման խնդիրներ ունեցող երեխաների կյանքի որակի բարելավումը՝ հիմնելով վերականգնողական խնամքի ցերեկային մասնագիտացված կենտրոն և ստեղծելով անհրաժեշտ անվճար պայմաններ երեխաների վերականգնման, գործունեության և սոցիալական ինտեգրման համար: Բոլոր ծառայությունները հաշմանդամ և զարգացման խնդիրներ ունեցող երեխաներին տրամադրվելու են անվճար ինչպես «Ֆինիշյան» հիշատակի հիմնադրամի կողմից, այնպես էլ ՀՀ առողջապահության նախարարության կողմից: Գեղարքունիքի մարզի Սևանի քաղաքապետարանի թիվ 1 «Բողբոջ» մսուր մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության հարավ-արևմտյան մասնաշենքը վերակառուցվելու և կահավորվելու է որպես վերականգնողական կենտրոն:<br>Ծրագրի նախագծման և իրագործման հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ Սևանի տարածաշրջանում չկա համապատասխան հաստատություն Սևան քաղաքի և շրջակա գյուղերի հաշմանդամ և զարգացման խնդիրներ ունեցող երեխաների կարիքները հոգալու համար:<br>Սկսած 2022թ. հունվարի 1-ից ՀՀ առողջապահության նախարարությունը կստանձնի գործառնական ծախսերը՝ համաձայն 2019 թ. նոյեմբերի 1-ին |

| | | |
|---|---|---|
| | | «Ձինիշյան» հիշատակի հիմնադրամի, ՀՀ առողջապահության նախարարության, Սևանի քաղաքապետարանի և «Սևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի միջև ստորագրված փոխըմբռնման հուշագրի: Բոլոր ծառայությունները հաշմանդամ և զարգացման խնդիրներ ունեցող երեխաներին տրամադրվելու են անվճար ինչպես «Ձինիշյան» հիշատակի հիմնադրամի, այնպես էլ ՀՀ առողջապահության նախարարության կողմից: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով, օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Ձինիշյան Հիշատակի Ծրագիր (100 Ուիդերսփուն փողոց, Լուիսվիլ, Կենտուկի, ԱՄՆ, 40202) |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Ձինիշյան» հիշատակի հիմնադրամ (քաղ. Երևան, Աբովյան փող. 34/5, ՀՎՀՀ 00060436) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, Գեղարքունիքի մարզի Սևանի քաղաքապետարանի թիվ 1 «Բողբոջ» մսուր մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության հարավ-արևմտյան մասնաշենք:<br>Բնագավառ՝ սոցիալական, առողջապահական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | **84,497,529 դրամ:** |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի և շրջակա գյուղերի 0-17 տարեկան մոտ 250 հաշմանդամ և զարգացման խնդիրներ ունեցող երեխաները (209 շահառուի ցուցակն այս պահին առկա է) և «Սևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղ. Սևան, Նաիրյան 169 |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 1-ը հունիսի 2020 թ. – 30-ը դեկտեմբերի 2021 թ. |

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. **Կատարել նախագծային աշխատանքներ՝** Սևանի վերականգնողական կենտրոնի վերակառուցման համար սեյսմոկայունության գնահատում և նախագծային շինարարական փաստաթղթերի մշակում:<br>**Ժամկետը** – 1/05/2019 թ. – 31/05/2019 թ. (ավարտված է)<br>**Բյուջեն** - 1,350,000 դրամ<br><br>2. **Վերակառուցել և վերանորոգել** Սևան քաղաքի մանկապարտեզի մասնաշենքը, որը կծառայի որպես վերականգնողական կենտրոն:<br>**Ժամկետը** – 1/06/2020 թ. – 30/12/2020 թ.<br>**Բյուջեն** - 38,149,229 դրամ առանց ԱՀՀ<br><br>**3. Կահավորել** վերականգնողական կենտրոնը մասնագիտական սարքավորումներով և կահույքով:<br>**Ժամկետը** – 1/07/2020 թ. – 30/12/2020 թ.<br>**Բյուջեն** – 7,275,000 դրամ առանց ԱՀՀ, որից 1,057,150 դրամ մասնագիտական սարքավորումների և 6,217,850 դրամ կահույքի ձեռքբերման համար:<br><br>4. **Հավաքագրել և վերապատրաստել** առողջապահական ոլորտի 12 մասնագետներ, որոնք հետագայում աշխատանքի կանցնեն կենտրոնում՝ շահառու երեխաների հետ աշխատելու նպատակով: Վերապատրաստման ծառայությունները ձեռք են բերվելու Արաբկիր ԲՀ ԵԴԱԻ ԱրԲես առողջության կենտրոնից և կիրականացվեն քաղաք Երևանում, Սևանում և Գավառում:<br>**Ժամկետը** – 1/07/2020 թ. – 30/12/2020 թ.<br>**Բյուջեն** – 6,062,500 դրամ առանց ԱՀՀ |

| | | |
|---|---|---|
| | | 5. **Ապահովել վերականգնողական կենտրոնի գործունեությունը**: Սկսած 2021 թ. հունվարի 1-ից «Ձինիշյան» հիշատակի հիմնադրամը կվճարի վերականգնողական կենտրոնի գործառնական ծախսերը, ինչը ներառում է կոմունալ և այլ վարչարարական ծախսերը և 12 մասնագետների աշխատավարձերը:<br>**Ժամկետը** – 1/01/2021 թ. – 30/12/2021 թ.<br>**Բյուջեն** – 30,555,000 դրամ<br><br>6. **Կազմակերպական ծախսեր՝** ծրագրի իրականացման ղեկավարման և մոնիթորինգի նպատակով:<br>**Ժամկետը** – 1/06/2020 թ. – 30/12/2021 թ.<br>**Բյուջեն** – 1,105,800 դրամ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Շինարարական աշխատանքների ծավալների և նյութերի տեսականու ձեռքբերման ընդհանուր արժեքը կազմում է 38,149,229 դրամ առանց ԱՀՀ:<br>2. Մասնագիտական սարքավորումների ձեռքբերում, որի ընդհանուր արժեքը կազմում է 1,057,150 դրամ առանց ԱՀՀ:<br>3. Կահույքի ձեռքբերում, որի ընդհանուր արժեքը կազմում է 6,217,850 դրամ առանց ԱՀՀ:<br>4. Առողջապահական ոլորտի 12 մասնագետների 6 ամսյա վերապատրաստում, որոնք հետագայում աշխատանքի կանցնեն կենտրոնում՝ շահառու երեխաների հետ աշխատելու նպատակով: Վերապատրաստման ծառայությունները՝ համապատասխան առողջապահական մասնագիտական ոլորտներում կկազմակերպվեն Արաբկիր ԲՀ ԵԴԱԻ-ի Արբես առողջության կենտրոնի կողմից, որը նմանատիպ դասընթացների կազմակերպման մեծ փորձ ունի: Արաբկիր ԲՀ ԵԴԱԻ-ի Արբես առողջության կենտրոնի հետ կկնքվի ծառայությունների մատուցման պայմանագիր: |

| | | |
|---|---|---|
| | | Վերապատրաստումը, որը բաղկացած է տեսական և գործնական մասերից, կիրականացվի քաղաքներ Երևանում, Սևանում և Գավառում: Ծառայության ձեռքբերման ընդհանուր արժեքը կազմում է 6,062,500 դրամ առանց ԱՀՀ:<br>5. Մեքենայի շահագործման նպատակով բենզինի, քսայուղերի, պահեստամասերի ձեռքբերում 19 ամսվա համար: Ընդհանուր արժեքը կազմում է 921,500 դրամ առանց ԱՀՀ:<br>6. Գրասենյակային պիտույքների և հեռախոսակապի ձեռքբերման ծախսեր 19 ամսվա համար: Ընդհանուր արժեքը կազմում է 184,300 դրամ առանց ԱՀՀ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսերը կազմում են 1,105,800 դրամ:<br><br>1. Տրանսպորտային ծախսեր - 921,500 դրամ<br>2. Հեռահաղորդակցության և գրասենյակային ծախսեր - 184,300 ՀՀ դրամ |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | • ՀՀ առողջապահության նախարարություն<br>• Սևանի քաղաքապետարան |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | «Ձինիշյան» հիշատակի հիմնադրամի առողջապահական ծրագրերի համա-կարգողը կհետևի ծրագրի իրականացման ընթացքին: Այդ նպատակով 2020 թ. հունիսի 1-ից մինչև 2021 թ. դեկտեմբերի 30-ը՝ ամիսը 2 անգամ մոնիթորինգային այցեր կկատարվեն: Կկազմակերպվեն կանոնավոր այցելություններ և աշխատանքների արդյունավետությունը բարելավելու նպատակով քննարկումներ՝ առաջացած հարցերին արագ լուծումներ առաջարկելով:<br>Շինարարական աշխատանքները կվերահսկվեն համաձայն ՀՀ օրենսդրության՝ տեխնիկական վերահսկիչի կողմից, ինչպես նաև ՀՀ կառավարության 2003 թ.-ի |

| | | |
|---|---|---|
| | | հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ